

## ՄԱՏԵՎԱԽՈՍՈՒԹԻՒՆ.

Ծանոթիոսի ժամանակագրութեան հայերէն ձեռագիրները:  
Այս վերնագրով մի հետաքրքրական յօդ-  
ոծ է տպուել լեզուագիտական *Hermes* թերթի  
թղին՝ երեսներորդ հատորում: որի հեղինակն է  
ծահոշակ պատմաբան պրոֆեսօր *Մոմղէնը*: Նա  
շումէ նախ և կարևոր ծանօթութիւններ տալիս  
սերիոսի ժամանակագրութեան հայկական թարգ-  
մութեան մինչև այժմ յայտնի Յ ձեռագիրների  
սին, որոնցից Զ առաջինները *Վենետիկի Միհ-  
արեանց մօտ են և գործ են դրուել մինչև այժմ  
ած հրատարակութիւնների համար, իսկ երրորդը՝  
Մայր Աթոռի մատենադարանումն է գտնուում:  
Նօթէ եղել միայն *Պետերմաննի տուած մի փոք-  
ր նմուշով*. Ահա այս վերջին ձեռագիրն է, որի  
վեց Մոմղէնի առաջարկութեամբ համամատու-  
թիւններ է արել Մայր Աթոռիս միաբան Գալուստ  
Տէր Մկրտչեանցը. և մեծարժան գիտնականը ծանօ-  
թանալով այդ աշխատութեան արդիւնքի հետ Մար-  
րուրդի համալսարանի արևելեան լեզուների *Պրո-  
ֆեսոր հայագէտ Խւտիի թարգմանութեամբ*,  
Ներկայացնումէ այս յօդուածի մէջ իւր հանած եղ-  
րակացութիւնը, Երևան է գալիս, որ ս. Էջմիածնի  
ձեռագիրն է միայն հիմնական, իսկ միւս երկուսը  
լոկ արտագրութիւն են նորանից. այնպէս՝ որ մին  
առանձնայատուկ ոչինչ չունի, իսկ միւսը թէ և ունի  
ասրբեր շատ տեղեր, բայց դոքա առհասարակ սըր-  
բագրութիւն են արտագրողի կողմից՝ աւելի ճիշտ  
միտք դուրս բերելու նպատակով կատարուած. *Պէտք*  
է ենթադրել, որ ս. Էջմիածնի ձեռագիրը 1696թ.  
ին Թոխաթումէ եղել, ուր այդ ժամանակ արտա-  
գլուխ է Միհիթարեանց ձեռագիրներից մէկը. իսկ  
1790թ. ին Կ. Պօլսում ուր նոյն միջոցին Միհիթա-  
րեանց միւս ձեռագիրն է արտագրուել. Աւգերիան,  
որ հրատարակել է ժամանակագրութեան հայերէնը  
և լատիներէն թարգմանութիւնը, իւր 1802—1809թ.  
Կ. Պօլսում գտնուած ժամանակ ձեռքի տակ է ու-  
նեցել դեռ մայր ձեռագիրը, և նորա թողած համե-  
մատութիւններով կարելի է հաստատել, որ դա յիրա-  
ւի ուրիշ մէկը չէ եղել քան Մայր Աթոռի մատե-  
նադարանում գտնուածը. Այդ պարզ երեսումէ նաև  
նորանից, որ երկուսն էլ բոլորագրով են գրած և  
ունեն իրենց զերայ մի գրեթու ի-նո-ղի-ս-ի կնիք, որ  
ըստ Աւգերեանի Գրիգոր Պահլաւունին է եղել բայց  
ըստ Խւտիի աւելի հաւանական կարծեաց՝ Գրիգոր  
Տղան. *Պետերմաննը* 1864թ. ին այս ձեռագիրը  
շատ որոնել է Կ. Պօլսում և չէ գտել. աւրեմն ար-*

դէն փոխադրուած էր այնտեղից: Իսկ երեք ձեռա-  
գիրների նոյն ծագումը յայտնի է նորանից, որ ե-  
րեքի մէջ ևս պակաս և սխալ տեղերը նոյն են.  
Այսպիսով պարզուումէ, որ քննադատութեան հա-  
մար նշանակութիւն ունի միայն ս. Էջմիածնի ձե-  
ռագիրը, և որովհետեւ Եւսեբիոսի ժամանակագրու-  
թիւնը նախնի պատմագրութեան ամենակարև որ գոր-  
ծերից է՝ Մոմղէն առաջարկումէ մի նոր հրատա-  
րակութիւն ձեռնարկել այս ձեռագրի վրայով:

Բացի հայերէնից կան այս ժամանակագրութեան  
լատիներէն և ասորերէն թարգամանութիւնները և  
յունարէն բնագրից միայն հատուածներ:

Դրօշակ, պատմուածք Գ. Լեֆորի. Թարգ.  
Գէորգ Ք. Մկրտումեանց, Թիֆլիզ. 1895.—Մի փոք-  
րիկ զրոյց է սա Փրանս—պրուսական պատերազմից,  
հայրենասիրական գաղափարով. Թէ բովանդակու-  
թիւնը և թէ թարգմանութեան ոճը ընթերցանու-  
թեանը արգելք եղող ոչինչ չեն ներկայացնում:  
Թէկ յանձնարարելու համար էլ առանձին ոչինչ  
չունին. Գինն է 8 կոպէկ:

Սոր Փնջիկ. Խմբագրեց Գէորգ Բարուրեանց,  
Թիֆլիզ. 1895. գինն է 5 կոպ: — Մի փոքրիկ ժողո-  
վածու դասագրքերից քաղուած հատուածների, որի  
համար կարելի էր գուցէ ընթերցողներ գտնել դըպ-  
րոցում չեղած մարդոց մէջ և ներել, ինչպէս երե-  
սումէ դեռ պատանի՝ ինչուրին, իւր անուն վաս-  
տակելու տենչը (նա խոսանումէ շուտով ուրիշ  
նման գրքոյներ ևս ընծայել), եթէ նա աւելի լաւ  
ուսուսերէն իմացող աշխատակիցներ կունենա, այ-  
սուհետեւ, որոնք այսպիսի անմիտ բան չեն թարգ-  
մանի օր. «Ես չեմ կարողանում նայել (աղլածնելու)  
նրա հրաշալի փետուրներին, բայց ուքերը ես չեմ  
ել տեսել և ձայնն ել չեմ լսել»:

Զամալեանց, Ս. Աստուած չճանաչող, Թիֆլիզ  
— Այս գրքոյնէլ, ինչպէս և հեղինակի միւս փոքրիկ  
զրոյցները, կարդացուում է հետաքրքրութեամբ,  
որովհետեւ ժամանակակից անցքերի վերաբերեալ մի  
դէպքի պատմութիւն է: . Աստուած չճանաչողը՝  
մի կտրիճ տղամարդ է, որ իւր անվեհերութեամբ  
ու քաջութեամբը սարսափ է ձգում հարստահարին  
թիւքերի վրայ և կարողանում է իւր ընտանիքի  
գոյքն ու պատիւը ապահովել նոցանից: